



Ս. ՅԱԿՈՔ ՄԾԲՆԱՅԻ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ օրացոյցին համաձայն, Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետին տօնը կը յիշատակենք Դեկտեմբերի կիսուն: Հայկական իրականութեան մէջ, հանրածանօթ այս յիշատակութիւնը երկար տարիներ շարունակ ի մի համախմբած է հայութիւնը: Մեզմէ շատեր կը կրեն Ս. Մծբնացիին անունը՝ Յակոբոս: Անուն մը, որ Հայ Առաքելական Եկեղեցիէն ներս զգալի ներկայութիւն է:


Պարթեւական տոհմէն ծնող Ս. Յակոբը, Ս. Գրիգոր Լուսաւորիչիին հօրաքրոջ որդին է: Անոնք որպէս փախստական Քրիստոնէական հաւատքի բարեպաշտութեամբ կ'ապրին: Սակայն Ս. Յակոբ Հայրապետ կարճ ժամանակէ մը ետք կ'որոշէ առանձնանալ եւ ճգնաւորական կեանք մը ապրիլ, հեռու մնալով մարդոցմէ: Քարայրի մը մէջ աղօթքով եւ ծոմապահութեամբ կը շարունակէ իր կեանքը:

Ս. Յակոբ իր գրիչով գրուած շատ մը աստուածաբանական ճառեր եւ յօդուածներ կը փոխանցէ ժողովուրդին: Ան իր հոգին Աստուծոյ կը յանձնէ շուրջ 347 թուականին:

Հակիրճ կերպով անդրադառնալէ ետք սուրբին կեանքին, կը տեսնենք անոր ունեցած նուիրումը, ծառայական ոգին եւ առաքելութիւնը, որոնց շնորհիւ է, որ մինչեւ օրս Հայ Առաքելական Եկեղեցին կը յիշատակէ իր տօնը, որովհետեւ ան իր ունեցած ճգնաւորական կեանքով մեր դիմաց կը պարզէ հոգեւորական կեանքին կարեւորութիւնը:

Հետեւաբար, սիրելի՛ փոքրիկներ, թող Ս. Յակոբի այս տօնը առիթ ըլլայ բոլորիս, աղօթքով աւելի հզօրանալու, խոնարհութեան, համեստութեան եւ ծառայական ոգիով լիցքաւորուելու:

Շնորհաւոր Ս. Յակոբ Մծբնացի Հայրապետին տօնը, եւ շնորհաւոր Յակոբ անունը կրող մեր բոլոր ԿԿՈՒ-ի հետեւողներուն:





Կրնա՞ս գտնել 10 տարբերություններ հետևեալ պատկերներուն միջև:



Գունաւորե՛ հետևեալ պատկերը:

Օգնե՛ Կաղանդ Պապային, գտնելու Ռուտովֆին:



Տառերը իրենց տեղերը կորսնցուցած են: կրնա՞ս շտկել զանոնք եւ կազմել Ամանորեան բառեր:

նմաբո
դադնԿա
սրադւաՆա
կիղնԵ
կգաՉնա

կոծիւՇ 'իվկնԳ 'նմոտուօղ 'նղոնտի 'մաղտոր
:միղղոտիոտուՄ

ԼՈՒՑԿԻ ԾԱԽՈՂ ԱՂՋԻԿԸ

Վառեց երրորդ լուցկին: Անոր լոյսին տակ տեսաւ կաղանդի ծառ մը: Խանութներուն մէջ տեսած կաղանդի ծառերէն շատ աւելի մեծ ու գեղեցիկ, անհամար խաղալիքներով, լոյսերով եւ մոմերով լեցուն:

Մինչ լուցկի ծախող աղջիկը յափշտակութեամբ կը դիտեր կաղանդի գեղեցիկ ծառը ու սրտանց անոր կը ցանկար, լուցկին մարեցաւ կամացուկ ու կրկին անհետացաւ ամեն գեղեցիկ բան մթութեան մէջ:

Բայց, կաղանդի ծառին մոմերը չ'անհետացան, այլ՝ սկսան դեպի երկինք բարձրանալ եւ աղջիկը հասկցաւ, որ անոնք աստղեր էին այլեւս:

Այդ վայրկեանին, աստղ մը ինկաւ երկինքէն եւ ետին ձգեց լուսաւոր գիծ մը: Լուցկի ծախող աղջիկը յանկարծ յիշեց մեծ մայրիկը, զոր այնքան կը սիրեր եւ տարիներ առաջ մահացած էր:

Յիշեց, որ մեծ մայրիկը իրեն կ'ըսեր ամեն անգամ՝ երբ աստղ մը սահեր երկինքէն, այդ կը նշանակէ՝ որ բարի մարդ մը հոգին աւանդեց:

Ու աղջնակը ինքնիրեն տխրելով ըսաւ, - ուրեմն քիչ ետք, բարի մէկը պիտի մեռնի:

Նորէն լուցկի մը վառեց: Յանկարծ լոյս մը պատեց զինք, լոյս մը, որուն նմանը երբեք չէր տեսած: Այս հսկայ լոյսին մէջէն, հրա՛շք, մեծ մայրիկը երեւցաւ իրեն:

Խեղճ աղջիկը, ձեռքերը երկարեց իր մեծ մօր ու աղաչեց, - մեծ մայրիկ, մեծ մայրիկ, զիս քովդ ա՛ն: Դուն ալ մի՛ անհետանար այնպէս, ինչպէս բոլոր գեղեցիկ բաները, զորս տեսայ եւ անհետացան:

Ու վախնալով, որ մեծ մայրիկն ալ կրնար անհետանալ, աղջնակը առաւ լուցկիի լման տուփ մը ու բոլորը միասին վառեց:

Շուրջը աւելի լուսաւորուեցաւ ու աւելի գեղեցկացաւ մեծ մայրիկը:

Այս անգամ սակայն, երբ լուցկին մարեցաւ, անօթութիւն ու պաղ չգգաց այլեւս լուցկի ծախող աղջիկը: Որովհետեւ, մեծ մայրիկը անուշութեամբ ծոցեցաւ փոքրիկ թռնակին վրայ, զայն կուրծքին սեղմեց եւ միասին թռան դեպի աստղերը, ուր ոչ պաղ կայ, ոչ անօթութիւն...

Առաւօտեան, մարդիկ գտան աղջկան դիակը՝ թաղուած ձիւնին մէջ, յուզուեցան, սակայն երբեք չգիտցան, թէ ի՞նչ գեղեցիկ բաներ տեսաւ ան, ու մանաւանդ չգիտցան, թէ որքա՛ն երջանիկ էր ան հիմա իր մեծ մօրը հետ, Աստուծոյ մօտիկ:

(Վերջ)



ՁԱՅՆԻ ԱԼԻՔՆԵՐ

Երբ ջուրին մեջ քար մը նետենք, ինկած կետեն կը յառաջանան բոլորաձև փոքր ալիքներ, որոնք շրջանակի ձևով կը հեռանան: Նոյնպես ալ կը տարածուի ձայնը: Ձայնի ալիքները կազմուած են թրթռացող օդի խաւերէն:

ԿԱՅԾԱԿ ԵՒ ՈՐՈՏՈՒՄ

Օդին մէջ ձայնը շատ աւելի դանդաղ կը յառաջանայ, քան՝ լոյսը:

Այդ պատճառով ալ, որոտումը կը լսենք կայծակը տեսնելէն քանի մը երկվայրկեան առաջ:

